# ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

Հունվարի 26-ին և 29-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:
Հունվարի 26-ի ընդունելությանը մասնակցել է 30 քաղաքացի: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով մարզպետին դիմել էր քսանհինգ, առողջարանային ուղեգիր հատկացնելու՝ երկու, պետպատվերի շրջանակներում վիրահատվելու՝ երկու և վառելափայտով ապահովվելու հարցերով՝ մեկ քաղաքացի:
Դրամական օգնության քսանհինգ դիմումներին տրվել է դրական լուծում:
Բավարարվել է նաև առողջարանային ուղեգիր հատկացնելու, պետպատվերի շրջանակներում վիրահատվելու և վառելափայտով ապահովվելու հարցերով դիմած քաղաքացիների խնդրանքը:

Հունվարի 29-ի ընդունելությանը մասնակցել է 31 քաղաքացի: Դրամական օգնություն ստանալու խնդրանքով մարզպետին դիմել էր քսաներեք, աշխատանքի տեղավորման՝ վեց, վերելակի վերանորոգման, հարևանից բողոքելու՝ մեկական քաղաքացի:
Դրամական օգնության դիմումներից քսանմեկին տրվել է դրական լուծում, երկուսը գտնվում են ուսումնասիրման ընթացքում:
Հաշվառման են վերցվել աշխատանքի ընդունվելու մասին վեց դիմումները: Վերելակի վերանորոգման, հարևանից բողոքելու մասին դիմումների վերաբերյալ մարզպետը աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներին հանձնարարել է ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություն:

